

ԿԵՆՏԱՆԻ ՇԻՐԻՄՆԵՐ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԵՒԱՆԵՆ

26 Մայիս, 1957: Մխիթարեան Սանուց (Վենետիկի) Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ՝ արժանավայել սը- դահանդէս մը կը կատարուի Շիշլիի դե- րեզմանատան մէջ, անմահ Մկրտիչ Պէ- շիկթաշեանի, Պետրոս Աղամեանի եւ Սրապիոն Հէքիմեանի շիրիմներու նորո- դութեան առթիւ: Արարողութեան վը նա- խագահէ Կաթողիկէ համայնքի Առաջնոր- դը՝ Գերպոյ. Պօղոս Արքեպս. Քիրէճեան. կը մասնակցին բոլոր վարդապետները, Վենետիկի ու Վիեննայի Մխիթարեան վարժարաններու վարչութիւնը՝ իրենց ա- շակերտներով, Ազգ. վարժարաններու բո- լոր Սանուց Միութիւնները՝ իրենց ներ- կայացողիչներով, Երիտասարդաց Դերա- սաններու Ակումբի անդամները, բազմա- թիւ հաւատացեալներ:

Երգեցողութիւնը շատ յաջող կերպով կը կատարէ Սաղըզ Աղաճի Մխիթարեան վարժարանի փոքրիկներու երգչախումբը: Արարողութեան ընթացքին խօսք կ'առ- նեն Պր. Նուպար Աղարեան (նախագահ՝ Մխիթ. Սանուց Մշակ. Միութեան), ապա բժ. Վարդան Կոմիկեան եւ Յովսէփ Գա- բայաճազ (անդամ նոյն Միութեան) եւ հուսկ Հ. Նիկողոս Վրդ. Քեհիայեան, զրուատելով եւ ոգեկոչելով Մխիթարեան այդ անմահ սաներու կեանքն ու դործը:

Անոնց լուսաշող ոգին թող սաւառնի ներկայ սերունդին, մանաւանդ Մխիթ. Սանուց Մշակութային Միութեան բոլոր անդամներուն վրայ, որոնք այսպէս ար- ժանավայել կերպով ջանացին պանծացը- նել իրենց երէց եղբայրներու նուիրական յիշատակը, նորոգելով ու բարեկարգելով անոնց շիրիմները՝ վառ պահելու համար նաեւ անոնց պայծառ օրինակը:

Մուրատ - Ռափայէլեանի ամալերջի հանդէսին (6 Յունիս 1957), անակնկալ մըն էր ամէնուս համար՝ օտար ականա- տեսի մը բերնէն լսել գնահատանքի խան- դավառ խօսքեր Հայաստանի մասին:

Comm. Matter, նախկին կուսակալ, 15 օր առաջ այցելած էր Հայաստան:

« Զերմ եղաւ մեր ընդունելութիւնը, ը- սաւ նա, Երեւանի օդակայանին մէջ, ծա- ղիկներով, ուղերձներով եւ համակրանքի խանդավառ ցոյցերով: Առաջին իսկ վայրկեանէն՝ այն տպաւորութիւնն ունե- ցանք իբր թէ Իտալիոյ մէջ ըլլայինք:

Շինութիւնները, ճարտարապետական կառուցուածքը՝ լուրջ, չքեղ, նուրբ, մա- նաւանդ պետական շէնքերու: Գրաւիչ էր մասնաւորապէս վարդապետ քարը:

Պետական Զեռադրատունը զգլխիչ բան մը ունէր, իր թանկարժէք հնութիւննե- րով: Մեծ է գիտական շարժումը. համալ- սարան, դպրոցներ, ընթերցասրահներ, թատրոններ կ'առնինքնն օտարականը:

Երկիրը ամբողջ աշխատանքի եռուղե- ուն մէջ, տեւական վերելքի ճամբուն վը- րայ կը թուէր:

Էջմիածնի մէջ ալ ջերմ ընդունելու- թիւն եւ հիւրասիրութիւն գտանք: Ներ- կայ եղանք մկրտութեան մը, եւ արժանի ողջունելու Վեհ. Կաթողիկոսը. նա շատ հետաքրքրուեցաւ մեզմով, մանաւանդ երբ իմացաւ թէ Վենետիկէն կու գանք, եւ սրտակից շեշտով յիշեց իր այցելութիւնը եւ յիշատակները՝ զոր պահած էր Վենե- տիկէն եւ Մ. Ղազարէն:

Հայաստանի տարեխն ու գոնեաքը ըմ- բռնեցինք զուարթ եւ ընկերական չըր- ջանակներու մէջ:

Երեւանը այսօր չուրջ կէս միլիոն բնակչութիւն ունի. ամբողջ Հայաստանի շուրջ 1/3ը: Ամէնքը խմբուած հայրենիքի սրտին մէջ, վստահ են իրենց կեանքին վրայ, ու կը գործեն ոգեւին: Փոքրիկ երկիր մը՝ հրաշալի վերածնունդի մէջ »:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ս Ս Ա Յ Ա Ծ Ե Ն Ք

ՍՈՎԵՏ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ
ԱԶԱՐԵԱՆ Ա. - Նոր վաւերագրեր Կոմիտասի մա- սին: (Առանձնատիպ): Երեւան, 1956, էջ 14:
ԱՆԱՍԵԱՆ Հ. - Թուրքական տիրապետութիւնը Հայաստանում 17րդ դարում: (Առանձնատիպ): Երեւան, 1951, էջ 20:
ԱՆԱՍԵԱՆ Հ. Ս. - Բուզանդարանի ուսուցչի թարգմանութիւնը: (Ապակետիպ): Երեւան, 1954, էջ 28:
ԱՆԱՍԵԱՆ Հ. - Փառապետ Բուզանդի Հայոց Պատ- մութեան ուսուցչի թարգմանութիւնը: (Առան- ձնատիպ): Երեւան, 1954, էջ 14:
ԱՆԱՍԵԱՆ Հ. - Հայ-յունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի չըջա- նից (17րդ դար): (Առանձնատիպ): Երեւան, 1954, էջ 15:
ԱՆԱՍԵԱՆ Հ. Ս. - Հայկական ազգիւրները Բի- յոյի մասին: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1957, էջ 147:
ԱՆԱՍԵԱՆ Ա. Հ. ... - Շարա Տաւեան: Հայպետ- հրատ, Երեւան, 1956, էջ 97:
ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ - Վասն վարդանայ եւ Հայոց ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ - Վասն վարդանայ եւ Հայոց պատերազմին: Ի լոյս ածեալ բազմաթիւ համար- ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր Մինաս- եան: Երեւան, ՀԱՍՈ ԳԻՒՄ Ակ. 1957, էջ ԾԹԻ- 224:
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ Տ. - Վարժապետի աղջիկը: Երե- վան, Հայպետհրատ, 1956, էջ 324:
ԿՈՍՏԱՆԵԱՆ Հ. Հ. - Անարկներ վերջին տառ- անակի Սովետահայ արձակի լեզուի եւ ոճի մասին: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1957, էջ 222:
ՀԻՍԵԱՆ Մ. - Զօհրապի գրական գիմանկարները (Առանձնատիպ): Երեւան, 1956, էջ 30:
ՄԱԿԱՐԵԱՆ Ա. - Հայ եւ Ռուսիայի մասին: (Առան- ձնատիպ): Երեւան, 1956, էջ 18:
ՄԱՆԱՆԴԵԱՆ ՅԱԿՈԲ. - Արմաւիրի յունարէն ար- ձանագրութիւնը եւ Գառնիի հեթանոսական տա- ճարի կառուցման ժամանակը: Երեւան, Պետա- մայրարանի հրտ. 1946, էջ 59:
ՄԱՐՏԻԿԵԱՆ ԵՂԻՇԷ. - Ստեփան Աղաջանեան: Երեւան, Հայպետհրատ, 1956, էջ 183 եւ 21
նկար:
ՄՈՒՐԱԿԵԱՆ Մ. Հ. - Քրիստոսի կարա-Մուր- ան եւ բազմաձայնութեան արժանատւութիւնը հայ երաժշտութեան մէջ: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ հրտ. 1956, էջ 285:

ՇԻՇՄԱՆԵԱՆ Ռ. Մ. - Էդգար Շահին: ՀԱՍՈ ԳԱ հրտ. 1956, էջ 125 եւ 38 նկար:
ՌԻԶԱՅԵՒ ՍԲԻՐ. - Մարտիմ Գորկու գրամա- տուրդին հայ թեմում: ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1956, էջ 228:
ՍԻՄԱՆԹՈ. - Ընտիր երկեր: Երեւան, Հայպետ- հրատ, 1957, էջ 251:
ՊԱՏՄԱՆԻԿ ԶԱՐԱՆ ՄԱՆԿԱՆ. - Միջնադար- ան պոէմ: Հրատարակեց Դուշանիկ Նազար- եան: ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1957, էջ 192:
ՄԱՍԷ ՌԻ ԶԻՆԷ - Քրդական տիրային-հերոսական վիպերգ: Հրատարակուիւմ Հաջիէ Զեդիի: ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1956, էջ 189:
ՌՈՒՍ. ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ Հոր հատորով: Եր- կրորդ հատոր: Երեւան, ՀԱՍՈ ԳԱ Հրտ. 1956, էջ 688:
ՇԵՔՍՊԻՐԸ ՀԱՅ ԲԵՄՈՒՄ - Հրտ. Հայկական Թա- տերական ընկերութեան, Երեւան, 1956, էջ 77:

ԱՌԱՆԱՍԵԱՆ ԽԱՅԻԿ ՎՐԴ. - Գրականութիւն: Ա. Հատոր, էջ 125, Բ. Հատոր, էջ 132: Պէյ- րուր, 1957: (Երկու օրինակ):
ԹԷՐԶԵԱՆ ՍՈՎՐԱՍ Յ. - Հաճնի ութամեայ գի- րականագրութիւնը: Պուլեմոս Այրէս, տպ. Արարատ, 1956, էջ 701: (Բ. տպագրութիւն):
ԼԱՅԵԱՆ ԳԱՐԻԲԵԼ. - Հայաստան եւ հայ դարը, Հայկական յարաբերութիւններու լոյսին տակ: Գախիք, տպ. Յուսաբեր, 1957, էջ 442:
ԿԷՕԹԷ (Յոն) ԵՈՂԱՆ ՎՈՒՅԱՆ. - Ֆառաշ: Ա- ուսից եւ Երկրորդ մասը: Թարգմանեց Սամա- ճեան Արամ: Իսթանպուլ, տպ. Հեմմոն, 1955-7, էջ 564:
ԿՐԹԱՆ-ԴԱՍՏԱՐԱԿԱԶԱՆ ԴԱՍԱՔԵՆՈՒԹԻՒՆ - «Ճգնազանգ Ահազանգ» մատենաշար, քիւ 2: Պէյրուր, 1957, էջ 24:
ՅԱՐԳԱՆՔ 20նրուն - Հրտ. Ս. Գ. Հեղինակ Կու. Նոր Սերունդ Տիւրքի Ուս. Միութեան Մարտի Մամանիկի: Պէյրուր, 1957, էջ 53:
ԶՈՒԳԱՍԸԶԵԱՆ ՎԱՀԱՆ (Ոսկի Պրոֆ). - Հո- րհատորիկ: Փարիզ, տպ. Թիւրպալեան, 1951, էջ 95:
ՊԱՅԲԱՐ - Նոր Տարւոյ Բացատիկ: Պոսթոն, տպ. Պայքար, էջ 320:
ԵՐԶԱՆԻԿ ՏԱՐԵԳԻՐԲ, ԻԸ. տարի: Կազմեց Բա- զարատ Թեւեան: Իսթանպուլ, տպ. Վարդ, 1957, էջ 183:
ՊԵՏԻԿԵԱՆ Ա. Ա. - Ժողով: Գիւրգ Դ.: Նիւ Եոք, տպ. Լէյլէկեան, 1956, էջ 223:

PRIX DE L'ABONNEMENT ANNUEL

ՏԱՐԵԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ			
Իտալիոյ համար . . .	3000 Լիր	Pour l'Italie . . .	3000 Lires
Արտասահմանի համար . . .	6 Տուր	Pour l'Etranger . . .	6 Dollars
Մէկ թիւը՝ 250 լիր -	0,50 Տուր	Le Numéro: 250 Lires -	0,50 Dollars

Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti - Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia

